

ՊԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ	համար
Տարեկան	12 Ձր
Վեցամսեայ	6 "
Արսասահմանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Աստիկայի	համար
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 "

Իմանցումն տոյր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերին երեսի համար 20 սանթիմ. է. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 գնդկոր լայն

Վստեղի համար ձ. րի 40 սանթիմ

ՇԱԲԱԹ

R. P. Kalmancarian, Mèchitharistengasse
(Autriche) W. 4.
Vienna

Նախկին Երևանի թերթի
հիմնադրողներու հաս-
ցիկն է.

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjourn“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՊԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐՈՒՄԻ ԶՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԻՐԸ

ՇԱԲԱԹԻՄ Ի ԲԱԺ. ՆՈՐԻ ԳՐՈՒՈՂ. ԲԱԺՆԵՒԻՆԸ ԿԵՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՀՐԵԱՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Քիչինչէվի հրեական կոտորածները պատճառները ուսումնասիրողները եւրոպական ազատ մասնաւոր, մանաւանդ «Լեօօրպէէն» մէջ եկան այն եզրակացութեան որ այդ խոշոր ոճրագործութիւնը ոչ թէ արդիւնք էր ուսումնասիրութեան, այլ ուսումնասիրութեան թելադրութեան. որով ուսումնասիրութեան սինքրը ուզեցին սարսափեցնել մի ցեղ, որի զաւակներուս ընկերվարական յեղափոխականները ամենամեծ տոկոսն են կազմում:

Սե իրօք ստատիստիքական տեղեկութիւնները ցոյց են տալիս որ ուսումնասիրական յեղափոխականները մեծ տոկոսը հրեաներն են կազմում և, բացի այդ, յեղափոխութեան ամենաեռանդուն քարոզիչները, հմուտ և ճարտար կազմակերպիչները հրեաներն են:

Այս երեւոյթը մենք հասկանում ենք այսպէս: Հրեան ուսումնասիրական յեղափոխականները մեծ տոկոսն են կազմում ոչ միայն նրա համար որ աւելի սղատասէր և ընկերական նոր վարդապետութիւնները բնութեւնը ընդունակ է, այլ որովհետեւ Ռուսաստանի մէջ ամենահալածված, անիրաւունք, պարտի աստիճանի հասած ժողովուրդը ինքն է ներկայանում և համոզված է թէ սահմանափակ կամ անկախ վարական երկրի մէջ ինքը իր բն. մարդ աւելի լաւ պէտք է կարողանայ պարել, քան ներկայ բռնակալութեան շրջանում: Բացի գրանից հրեան ընդմիջող գրկված լինելով հայրենիք ունենալու յոյսից, ուր ինքը կարող էր իր ուզած ձեւով իրեն համար հանրային և անհատական կեանք ստեղծել, գրութեամբ, առանց ուղղորդիչ ու և ֆակտոր կորցնելու վախի, անձնատուր է լինում կոմսոյո լիտութեան գաղափարին, համոզված լինելով որ սիրելի հրեան

ժողովուրդն այլ եւս ինքը անկարող է մարդկային կեանքի յառաջդիմական գործի մէջ մի բան մտցնել, ուստի աւելի նպաստաւոր է նեցուկ դառնալ այն զրգոհ տարրերին որոնց ստեղծելիք պետական և ընկերական կազմակերպութիւնը գոնէ իրեն միջոց կտան իր բն. մարդ լաւ ապրել:

Այդ է պատճառը որ այսօր Աւստրիայում, Անգլիայում, Ճերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Զուիցերիայում հրեան իրեն այդ երկիրներէ քաղաքացի է ճանաչում և կորցրել է իր սպառնալից կեանքի բնորոշ կողմերը:

Ձը նայելով այս բոլորին՝ աշխարհաքաղաքացի հրեայի սրտի խորքերում անգամ թագնը վաճ են սեփական հայրենիք, ազգային կեանք ստեղծելու տենչը, որի նշանները վերջերս երեւացին սիօնի վրայ և այլ գրեւորանքները երեւոյթներով թեւեւ այդ տենչը այնքան իտու է, որ հրեան աւելի կոմսոյոլիտ են ներկայանում, քան ազգասէր և հայրենասէր:

Պատմական դժբաղդ պայմանները հրեային թէ Գրիտտոսից սուս, թէ Գրիտտոսից յետոյ, ստիպել են հայրենիքից զրկվել, ապրել ճնշիչ և զօրեղ ժողովրդների մէջ, միշտ զիջողութիւններ անել, որով և կորցրել են իրենց սոցալայնական ձգտումները, ուղած չուղած գարձել կոմսոյոլիտներ, իսկ վերջին գարում երբ ստեղծվեցին անհայրենիքութեան տէօրիաները, երբ ամէն բանի հիմքը ընդունվեց անսեփական գրութեան հաստատութիւնը, հրեան ամէն երկրում փարեց այդ վարդապետութիւններին, հաստատեց լինելով որ միայն այդ տեսակ ընկերական պայմանների մէջ ինքը վերջապէս կարող է ազատ վել գարեւոր հալածանքից, պարսկայի վիճակից:

Սրանով ինքն է մենք չենք ուզում հրեաներին մի անհա-

մակրելի ցեղ ներկայացնել: Ընդհակառակը, մենք հիանում ենք մարդկային այդ ընդունակ և ուժուն ցեղի վրա, որը կամաակամա ժամանակից առաջ կոմսոյոլիտ է գարձել և մի նմուշ է ներկայանում ցեղերի զոյուլիտեան կուր մէջ իր գիմացկունութեամբը:

ՎՈՐԳՈ
(Շարունակ չի)

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

(Շար. նախորդ քիւն և վերջ)

Այժմ տեսնելով թէ ինչպէս կուզեն ցարկմը սօցիալիզմով սապալել և մեզից ցեղային ազատութիւն ստեղծել:

Սկզբունքով երբէք հակառակ չեն սօցիալիզմի, ուր իսկ համակիր եմ եւ չեմ կարող հակնալ անոնց նպատակը, որոնք որպէս գերագոյն չարիք մեր դատին, կուզեն հակազդելուց կովկասի մէջ իրօք սօցիալիզմի պէտքը զգալի է: Եթէ ես այստեղ ստիպուած եմ սօցիալիզմի հակառակ ճանով՝ այդ ազդի ընդհանուր շահը ինկատի ունենալով է:

Ազգային ազատութիւն ձեռք բերել ընկերական պարզ հարց մը չէ եւ ոչ ալ անսեփական, այլ ազգային լինել չի լինելու բարդ խնդիր մը, ատոր համար ալ աւելի յաղաքական բնատուր թիւն ունի, ինչո՞ւ մենք ալ քաղաքականութիւն չի բանեցնենք, ինչո՞ւ հրայտիքի տեսակաւնէն միայն հմայուած զանք հոսանքն է վար աչքերն իտուի, երբ նոյն իսկ ամենաթուր սօցիալիստներն անգամ իրենց ապահով, ընկերական խաղաղ կուրի մէջ իսկ քաղաքականութիւն կը մտցնեն:

Մեր ընկերվարականները կուզեն հաստատեն ինք թէ սօցիալիզմով եւ այն յեղափոխական սօցիալիզմով պէտք է սապալեն ցարիզմը, միայն պայծառութեամբ ուժեղով:

Մեր ժողովրդի գրեթէ հարիւրին 80 տոկոսը գիւղացի են, եթէ չեմ սրտախորք եւ կովկասեան մեծ քաղաքներու բնուորները, ինչպէս յօդուածագիրը կը յայտնէ, հողի սակաւութենէն եւ տուրքերու ծանրութենէն ստատալող գիւղացի մշակներ են, զոր կարելի չէ անմիջական պայքարիտ անուանել քանի որ որոշ սեփականութիւն ունին եւ ընդմիջտ սա-

լայտականիւր վրայ նետուած գործաւորներ չեն, այլ որոշ ժամանակով միայն: Արդ, դու յայտնի ճշմարտութիւն է որ գիւղացի դասակարգը ամէնէն աւելի պահպանողական, ամէնէն աւելի սեփականութեան սկզբունքին, հողին փակած դասակարգն է, եթէ զմէք բազմն ու չարաչար աշխատանք յաջողած են իր կուրծքէն ցատուի վայրկեանական ազդակը խել եւ վարիչներու մտաւորին սակ տեղադրու կուր մը բլոր կատարութիւնը ի հանդէս բերել, այդ դեռ չի նշանակեր թէ ատոնք բոլորը համոզուած սօցիալիստներ եւ յեղափոխականներ են, կարող է աւերելութեան լինել եւ որովհետեւ կեանքի իրական պայմաններէն ճան չէ, շուտով մոռացուի, երբ պայմանները քիչ մը մեղմանան, Մեր յեղափոխութիւնն ալ ուրեմն ճիշտ այդպէս ներքին ինքնաբոյս ժողովրդական համոզման մը արդիւնք չէր, այլ կրակոտ ազգաբնութեան մը հրապուրիչ ցնցող զգացում մը որ հովի պէս բուռն կերպով եկաւ, անցաւ, ասանց խորքին ալիքները շարժելու:

Ահա այդ պատճառաւ մեր յեղափոխականները թերեւս աւելի բողոքու յաջողութիւն գտնեն այժմ, որովհետեւ ժողովուրդը սլեւս աւելի քան երբէք համոզուած է հիմայ յեղափոխութեան փրկարար ուժին, եւ ցատու մը անգին է ու գիտակից ժողովրդական բոլոր խաւերու մէջ:

Իսկ եթէ մեր ընկերվարականութիւնը այնուամենայնիւ կազմակերպուած գործաւորներու բանակի մը վրայ դրած է իր յոյսը կործանել եւ ցարիզմը եւ պարտաւարական, այդ չափազանց մեծ հաւատք է որ անհատատալիին կը մօտենայ, որովհետեւ նա իր ազգային սեփականութեամբ շատ չնչին ընդդիմութիւն մը կը ներկայացնէ եւ կարող է հեշտութեամբ փշուրիլ ցարիզմի սոսկալի թաթերով եւ այն՝ օրինական կերպով առանց որ ոչ ոք իրաւունք ունենայ բողոքելու: Ինչու կառավարութիւնը որոն համար փոքրիկ լըրբութիւններ ստաթիւնութիւններ են, կարող է հռչակել հայ ժողովուրդը ապստամբ ու վարուիլ ըստ աջմուտ: Ուրեմն հայ ընկերվարականները կամայ սկզբանայ ստիպուած են գործել ուսումնասիրականներու նետ միացած, իսկ ուսումնասիրականը չի սիրել ազգային հարցեր յարուցանել, թիւրեւս սալախիլ սիրուն համար զիջողութիւն ընէ հայրերու փայփայած մտքին սկսկալաւ կովկասցի-

բայց այդ բոլորը ինչ ձևով ալ շարադրուած ըլլաւ, շատ բան չէր փոխեր:

Մէկ մըն ալ մը՝ գործեր այդ ոճերը բնական ըրածք են. բնական ըրածք են, շատ հեռու չեն լինար, մանաւանդ անցածին վրայ սերտագործը ապահովցնել կ'ըլլար, պայմանաւ որ մէկ մըն ալ սերտը չի կրկնուէր, այսինքն մէկ մըն ալ չըրպանէ՛ր ին ան միջոցներն ու Չրթծածներ:

Այ՛, ճիշտ խմբագիր, հետ է որ մենք կը բաժնուինք ձեզ, անկէն առաջ պէտք չէ մտնալ նահանգի և Չրթծածներ անմեղ արիւնները, որոց կու գան խառնուել ճիշտանքի պէս անկեղծ ու անձնուէր հայրենու սքրններու և գետ որբան անմեղ արիւններ, որոնց ամէնն ալ այդ կուտակցութիւնը, այդ կեցողութիւնը առաջ, միշտ միջոցներն երգանակով, միջոցներն վտուածներ:

Այդպիսի բոլորագիրը խրկել այնքան անբնական չէր որ սերտը զապէս անիկայ գետ յեղափոխական կեցողութիւնը և անոր հետեւեալ զգործելի տիրացուները կուտակցութիւն մը ճանչնալ բնական չէր չենք կրնար, ալ յեղափոխութիւն մը ընդունելի ոչ ճիշտ զտորջր որ այսքան ոճերներու մայրը եղած է:

Այ՛, Հայերը պէտք է անտարբէր չմնան ոճերներու առջեւ, պէտք է ամէն կողմէն բոլորագրերը ու պարտաւարները տեղան, բայց զանոնք խրկելու է ոչ թէ ոճերգործներու կեցողութիւն ալ խրկելու է զանոնք արտասահմանան աղատ լրագրութեանը որ ազդին անկեղծ ձայնն է ու ինքը ազդը կը ներկայացնէ:

Այ՛, բոլորագրերը խրկուելու են այն մեծ ու անողորմ զատուելին զոր ազդը կը կոչեն, և որ թե՛ն ծանր կը շարժի բայց իր վճիռը ստակարի է:

Վարդգիս ձրպուրի

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՈՒԱՅՆՆԵՐԸ

«Կալիսա» պաշտօնական լրագիրը մի շարք յօդուածներ է նուիրում հայ եկեղեցու կալուածները դրամական հարցին: Դա մի բնագրական զեկուցում է, որ սկզբում (նո. նո. 197, 198, 199) խոսում է, թէ մինչև այժմ ինչպէս են վերաբերել զանազան պիտուութիւնները զանազան ժամանակ եկեղեցական և վանական կալուածների գրաման հարցին և թէ ինչպէս է լուծուել այդ նոյն հարցը Ռուսաստանում ուսումնասիրելու և այլուղան և կեղեցիների և վանքերի կալուածները վերաբերմամբ: Ենթադրուելիքն այն հանգամանքը, որ Ռուսաստանում յարգուելիս գրաման են նաև ուսումնասիրելու և կաթօլիկ եկեղեցիների և վանքերի կալուածները: «Կալիսա»

լրագիրը (նո. 200) շարունակում է իր խօսքը այսպէս:

«Մինչև վերջին ժամանակ մեր կառավարութիւնը, զանազան միջոցներ գործ դնելով առաջադեմ և այլազան հոգեորակման իրենց եկեղեցական կալուածների վերաբերմամբ, ամենին չէր շոշափում հայրենուստիչական եկեղեցու կալուածական գրութեան հարցը, մի եկեղեցու էր Ռուսաստանի սահմաններում երկուսու առաջին օրից սկսած՝ միշտ վայելելով մեզանում առանձին հոգեւորութիւնը, և այս վերին ուղով էլ կազմված է 1836 թ. մարտի 11-ին Ռարձրագոյն հաստատված Պօլօմէնի ինչն, ներկայումս այդ բարեացակամ վերաբերմունքը զգալի հայրենասիրչական եկեղեցին դրեց կառավարութեանը ուղղութիւնը դարձնելու նրա ներկայիս գրութեան վրայ, որ անկման է հասել:

Հայրենասիրչական եկեղեցու հոգեւոր հաստատութիւնների պահպանութեան զլրուող միջոցները նրա հոգեւոր սննդը, խառնութեանը և այլ կալուածներն են, որոնք գտնվում են կալուածում և Ռուսաստանի մի քանի ներքին նահանգներում: Այս կալուածների արդիւնքով էլ պահպանվում են նրա գոյնը եկեղեցական հաստատութիւնները, բայց մի քանի ժամանակից ի վեր կեցողութեան գալ, որ անտեսական գործերը այդ կալուածներում չարազանց անկարգ դրութեան են մատնված և որ այս հանգամանքը մեծ է պատճառում հենց իրան՝ եկեղեցու նվաճական բարեկեցութեան: Ռուսաստանում հայրենասիրչական եկեղեցուն և նրա հաստատութիւններին պատկանած կալուածների վարչութեան զրույթեան մասին պայտօն սպէս ժողոված անդեկուլիսներինք երևաց որ այդ կալուածները մանաւանդ վանքականները, կառավարվում են շարժազանց անկարգ և անհարմար պայմանում: Հայրենասիրչական եկեղեցու կալուածների անտեսական գործերի անկարգութեան վերաբերելով գանձարանի յիշատակ, յոճախ պատահում էին և մասնաւոր ձեւը, Հայ մասնաւոր, որ միշտ թանկ է համարել իր համար հայ եկեղեցու շահերը, մասնացոյց էր անում, ի միջի այլոց, վանքական անտեսական անհարմարութիւնների անպատակ ուղղացումը եկեղեցական կալուածների վանքական կառավարչների ձեռքով, խիստ հաշտութեան և հրկոզութեան բացակայութիւնը այդ կալուածների վրայ և այլն: Ստացվում է այսպիսով այն պատկերը, որ նրկապատմ էր 30 տարի առաջ Ռուսաստանում և մուսուլման վանքերի կալուածների մէջ, որոնք պատկանում են ս. վայրերի Արեւելքում: Ինչպէս այնպէս, այնպէս էլ այստեղ կառավարչների ձեռքով անտեսական գործերը վնասակար եղանակով վարչական սեփականութիւնը հարց էր դառնում: Մենք հիտու ենք հայ եկեղեցու ամբողջ հոգեւորականութիւնը եկեղեցական և վանքական կալուածները աշակէտ անհարմար կերպով կառավարելու մէջ մեզ գործող գիտութիւնները, լաւ խմանքով, որ ինքը հոգեւոր գասը հնարարութեան ինչպէս միջոցներով և պարզելի անտեսական գործերի բոլոր նրբութիւնները: Եւ նոյն իսկ զանազան կալուածները կառավարել, հետապնելով հոգեւորականութեան ուղղութեամբ:

Թիւրք աւելի բարձր բարոյական կարգի պարտաւորութիւններ կատարելուց, ուղղակի համապատասխան է եկեղեցու իսկական կոչմանը: Այս իրիւն հանգամանքին գիտակցել էր, բաւ էր երկուսին նոյն ինքն հայոց հոգեւորականութիւնը, որ երբեմնակէս հրաժարում էր իր կալուածների մէջ կարգ հաստատելու հոգեւորից եւ կալուածներում էր գաղտնի կիսաշարժական խորհուրդները, որոնք կառավարում էին այդ կալուածների բոլոր գործերը կամ հրաժարում էր դրա համար առանձին կառավարչներ: Բայց այդ միջոցներն էլ որոնք վկայում են հոգեւորականութեան կատարելու անձեռնհասութիւնը վարելու իր անտեսական գործերը, անպատակ անհարմար: Տեսնուական գործերի քառասական գրութիւնը եկեղեցական եւ վանքական կալուածներում՝ քրոնիքական երեսօյն է, որ չարտեսակում է ի վնաս որպէս եկեղեցական շահերի, այնպէս էլ իրերի անտեսական պայմանները: Մի միայն անտեսական անտեսական անպատակ վարումը վանքական կալուածներում, որ երբեմն անտեսները անկարգ կերպով ուղղացելուց անհարմար անտեսութիւնների վրայ, նի. իսկականակէս աւելի է իրան հոգեւորականութեան համար, չը խօսելով արդէն այն վնասակար ազդեցութեան մասին, որ անում է անտեսների վրայ, որ ոչ ոք մը այն տեղի իր կրկնուելու երկրի արտադրական բնութեան կալուածները, ուր տեղի ունի անտեսական այդպիսի անտեսութիւն:

Այսպիսով, եկեղեցական և վանական կալուածները աշտեսաբար կառավարելու պատճառով, հոգեւոր գասը ստանում է միայն մի մասը այն եկամուտից, որ նրա կարող էր ստանալ գործերը աւելի նպատակաշարժար կառավարելու ժամանակ: Այն ինչ հայ գիւղական հոգեւորականութեան մեծամասնութեան ներկայիս ծանր դրութիւնը յայտնի է ամէնքին, Չստանալով ու ոչ ուժիկ՝ նա գոյութիւն է պահպանում ծիականների կառավար տուրքերով, իսկ ձեռքի վանքները, որոնք հոգեւորական այդ պարիւրն էլ կառավարում է, եկեղեցու պաշտօնականները մնում են անօգնական:

Մշակ (Շարունակելի)

ՔԱՅ ԿԱԼՈՒԱՅՆ

9. Ե. ՍՐՄԱԿԵՆԵԱՆԵԱՆ

Չեր օվերլին խօսքը խորագրով բայ նամակին մէջ չորս պարբերութիւններ շարած էր իրարու ետեւ յայտարարելով թէ՛ ատոնք մեր ըսածներն են, զորս պէտք է հերքենք կամ հաստատենք:

Չեր ուզած կարգու պիտի պատասխանենք ձեզ, մեզ վերապահելով ուղղիւ իրա ունքը, ինչ որ կայ անձինք և երկրի մեր ըսածներուն մէջ:

1. Պուլիարհայ վարժարաններու մէջ նոր սկսուող փճանալու վրայ է (ոչ թէ սպախանութեան վարքեր են, ինչպէս դուք կ'ըսէք) արդէ յոսի գաստակարութեան պատճառաւ: Ասոր ապացոյցը կ'ուզէք կարգացէք նախորդ յօդուածին, ուր բաղդատութիւն մը ընելով մեր այժմու հետեւած ուղղութեան և ճշմարիտ դաս-

տիարակութեան միջև յայտնի կերպով եզրակացուցած ենք թէ մեր վարժարանները պատուած արդիւնքը սպէ շատ հետո են, Կալով թրքահայ վարժարաններուն, անոնք այն ոչ մէկ արարելու թիւն ունին մերիննեքին: Եթէ դիտէք անոնց ունեւ մէկ առաւելութիւնը, ցոյց տուէք:

2. Ուղղակի ուսուցիչներու հասցէին ունեւ բան ըսած չենք, բայց երբ մեր տուած դաստիարակութեան յոսի ուղղութիւնը կը քննադատենք, դիրքին է հետեցնել թէ վարժարանին չէնք բեր չեն որ այդ բանին պատասխանատու պէտք է ճանչնանք, այլ ուսուցիչները իրենց ազիտութեամբ կամ անհոգութեամբ, որը որ կ'ուզէք, հասկցէք:

3. Բոլորովին կը խեղաթիւրէք, երբ կ'ըսէք թէ փողոցի տղան բաղդատելով զպրոց գացող տղուն հետ, անհամեմատ բարձր գտած ենք առաջինը: Եթէ համոզուած ըլլալինք որ դաստիարակութիւնը վնասակար է սղոյոց, այն տեսն այդ խնդրով ըզբազկու աղայամտութիւնը չպիտի գործէինք: Փողոցի տղայը շատ աւելի աշխոյժ, սրաւիտ և արթուն կ'ըլլան քան մեր տղանքը, ըսած ենք, մեր այս վերջնոց տուած ֆիլիքական և մտաւորական յոսի գաստիարակութեան հետեւեալով, Այս ալ ինքնայայտ ճշմարտութիւն մ'է, կարծեմ:

4. Կեցր. վարժարանի աշակերտները չէ որ քննադատուած ենք, ինչպէս դուք կ'ուզէք հասկցնել տալ, այլ կեցողականի ուղղութիւնը: Եթէ դատողութիւն, խեղք բուռած բանին նշոյլը գտնուէր քովերինք, պիտի կրնայիք մտածել թէ վարժարանի մը աշակերտները չեն որ պատասխանատու են վարժարանին ուղղութեան, հետեւակէս աշակերտներուն հետ ոչինչ կրնանք ունենալ: Իբրև կեցողականի շրջանաւարտ, մտէն ծանօթ՝ այդ հաստատութեան, մեր խօսած ատեն որոշ, որոշ ցոյց ապրով անոր բարոյակէս աղտոտ միջավայրի մը և առողջապահիկ պայմաններէ զուրկ, ապականած միջոցով մը մէջ հաստատուած ըլլալը, իւր վերջին ծայր խոնդեալ ծրագրեր, աղայոց կէսօրներուն գուրս ելնել արգիւտած ըլլալով անունքէ երկուիլը, դաստուենքու ընթացքը, շատ իրաւացի կերպով հետեցուցինք թէ այդ հաստատութիւնն ալ ոչ նուազ քննադատելի է մեր միւս վարժարաններին, Եթէ մեր ըսածներուն մէջ կը գտնէք ունեւ անձինք կէտ մը, ըսէք հրապարակաւ:»

Ահաւասիկ կը տեսնէք որ շատ բացորոշ կերպով մեր ըսածները կը կրկնենք, բայց դուք միշտ փոխուտու կուտաք մեր ըսածներուն դէմ ունեւ լուրջ աւարկութիւն ընելէ, ամէն անգամ ձեր միակ պատասխանը կ'ըլլայ նեղր մնացած թուրքերու պէս Տիւնիսի սիւ ըսել:

Ինչո՞ւ չ'էք ջանար ապացուցանել թէ մեր ըսածները անհիմն են, և կուգաք ոտտայնանկութեամբ զրաղած ըլլալինս մեր երեսին զարնել իբր յրէական յանցանք, Եթէ կը կարծէք թէ՛ ունեւ արհեստով կամ ձեռնական աշխատութեամբ զբաղիւ մարդը անյարմար կ'ընէ դաստիարակ

(*) Պ Փէշտիմալեհանի պատասխանին այս և մասը ինքնին Չորս կիոյնայ ամբողջութեամբ՝ նկատելով որ վերջին Շարունակին մէջ վրայակով մը ուսանող բառը շտկուած և ուսուցիչ եղած էր:

Ծ. Խ.

ժր ըլլալու, ատով բացարձակ տգէտ ըլլալնիդ—ինչ որ արդէն տարակոյս չը վերցնէր—յայտնի կ'ընէք. Արհեստ մը գիտնալը դաստիարակի մը համար առաւելութիւն մ'է քան թէ թերութիւն. Այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհ մէջ ձեռակաւ սշխատութիւնները անհրաժեշտ մաս կը համարուին դաստիարակութեան:

2. Փնջիւնայնեան
5 Օգոստոս 1903
Տօպրիշ

ԹԱՏՐՈՆ

Ի նպաստ Վ. Պապեանի տրուելիք ներկայացումը օգին գէշութեան պատճառաւ յառաջիկայ երկուշաբթի գիշերուան յետաձգուած է:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռումանական «Իւնիվէրսիւլ» թերթը մանրամասն կը նկարագրէ Կարապետ Մարտիրոսեանի սպանութիւնը և անոր արիւնլըւայ գիւղի վիճակը: Կարագրուած են նաեւ սպանողին գիւմագծերը ու սպանողը խստութեամբ կը փնտռուի:

Կարապետ Մարտիրոսեանի կիներ Վառնա կը գտնուի եզեր ամիսէ մը ի վեր և ամուսնուն ըսպանութեան լուրը առնելուն պէս մեկնեց է Ռումանիա: Կինը յայտնեց է որ ամուսինը միշտ կը վախնայ եզեր որ զինքը պիտի սպաննեն և ատոր համար ալ ոչ հայաբնակ քաղաքի մը մէջ բնակութիւն հաստատեց է:

—Ամենայն հայոց կաթողիկոսին հրաժարման լուրը բոլորովին անհիմն կը յայտարարեն պոլսական թերթերը:

ՄԱԿԵՂՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ապստամբները կէս միլիօն ֆրանկ արժող կամուրջ մը օգը հանեց են: Այդ կամուրջը օգը հանելու համար քանի մը անգամ փորձ եղած էր բայց չէին յաջողած:

—Օխրիտիայի գաւառի մէջ կոտորած տեղի ունեցեր է գիւղերուն մեծ մասը օգոստոս 4 ին բոլորովին ջնջուած է. 1500 ի շափ թուրք զօրքեր յարձակեցին 15 գիւղերու վրայ և բոլոր կիները, տղաները և ծերերը կոտորեցին: Գիւղերու մէջ այր մարդիկ չեն գտնուեր, անոնք բոլորն ալ միացած են ապստամբներուն: Կոտորածէն վերջը գիւղերը հրդեհուած և մոխրի վերածուած են:

—Մանասթէն եկած վերջին տեղեկութիւններու համաձայն, քաղաքին վիճակը շարունակյուսահատական է, քաղաքի տները և խանութները գոց են: Քաղաքին շուրջը պտտող զինուորները

երեք պուլիար գիւղեր այրեց և բնակիչները կոտորեցին:

—Փուրք զօրքերը յարձակեցին լեռնի գաւառի Ռաքօյօ, Վիդօյ և Բուկ գիւղերուն և ուրիշ երկու գիւղերու վրայ ու բնակիչները ջարդեցին:

—Իւսկիւպէն եկած տեղեկութիւններու համաձայն ամսոյ 5 ին ապստամբներու երեք ուժեղ խմբեր երեցեր են այդ նահանգին մէջ: Թուրքերը չափազանց գրգռուած են. ջարդելու կը պատրաստուին: Պուլիար ժողովուրդը մեծ սարսափի մէջ է:

—Վերջին տեղեկութիւններու համաձայն Գրուշօյ քաղաքը ոչ միայն կրկին թուրքերու ձեռք անցած է, այլ և բոլորովին կործանուած է: Ապստամբներուն անձնատուր ըլլալու մերժումէն ետքը թուրքերը կատաղի յարձակում գործեցին. փոզոցներու մէջ կռիւլ տեսեր է երեք չորս օր: Ապստամբները կուեր են մեծ քաջութեամբ և բաւական զինուոր սպաններ են: Երեք օրուան յուսահատական կռիւն վերջը զօրքը հրդեհեց է ապստամբներուն գտնուած թաղը. և այդպէսով ստիպեց է որ քաղաքէն հեռանան: Ապստամբներու հեռանալէն վերջը սկսեց է սարսափի ի կոտորածը: Թուրքերու կատաղութեան զոհ դարձեր են անպաշտպան կիները, երիտաները և ծերերը: Երկու օրուան ջարդէն վերջը սմբողջ քաղաքը աւերեցին: Շատ քիչ ընտանիքներ կրցեր են թուրքի սուրէն ազատիլ:

Այդ երեք օրուան յուսահատական կռուի միջոցին 250 ի շափ թուրք զինուոր սպանուեցին, 12 հոգի ապստամբներ, և 10 հոգի ալ վիրաւորուեցին:

Ներկայիս Գրուշօյ քաղաքը աւերակներու կոյտ մը կը ներկայացնէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուս, պաշտօնական թերթին մէջ հրատարակուած այն հեռագրերը զոր Պոլսոյ դեսպան Ջինովիէֆ ուղղած է Սօֆիայի ռուս ներկայացուցիչ Պախմէթիէֆին մեծ ապաւորութիւն գործած է ելալին վրայ: Այդ հեռագիրը այնպիսի բովանդակութիւն մը ունի, որ թէ թուրքերու դէմ խիստ է և թէ պուլիար կառավարութեան կը պահանջէ խիստ բլլալ գէպի Մակեդոնացիները:

—Բարձրագոյն դուռը Ռուս և Աւստրիական դեսպաններուն հաղորդեց է որ Սարաջօվ և իր երկու ընկերները կը գտնուին Մո-

նասթրի գաւառին մէջ:

—Ռուս կառավարութիւնը կը պահանջէ նաև որ սպաննուած հիւպատոսին կառքին վրայ հրացան արձակող զինուորներն ալ խստիւ պատժուին: Պոլսոյ պուլիար գործակատար բողոքեր է ուստիկանութեան նախարարին ուստիկանական իշխանութեանց դէմ, որովհետև քանի մը ժամանակէ ի վեր ուստիկանութիւնը գործով Պոլիս եկող Պուլիարները կը ձերբակալէ, և մեծ դժուարութիւններ պատճառելէ յետոյ հաշիւ կարձակէ:

—Եւրոպական պետութիւնները բարձ, դռնէն պահանջեցին որ խիստ միջոցներ ձեռք առնուի իրենց հիւպատոսներուն ապահովութեանը համար:

ՌՈՒՍԻԱ

Իշխան Մէլչէրսի, կրճատներն թերթի խմբագիրը կ'առավարութեան կառավարիչ բոլոր Ռուս հիւպատոսները Մակեդոնիայէն ետ կանչուին. որպէսզի Մակեդոնացիները չը քաջալերուին անոնց ներկայութեանէն:

—Գերմանական թերթ մը կը հաղորդէ թէ Ռուս Սինօզը նկատելով որ ժողովրդի մէջ ստեղծութիւնը դէպի հրէաները մեծ շարժեր կան, հոգեւորականութեան հրաւեր կը Կարգայ քարոզներով ժողովրդին հասկնել որ հրէաները հալածելը քրիստոնէի մը համար վայել չէ, մանաւանդ որ անոնք ալ քրիստոնեաներուն պէս Յարին հպատակներն են:

—Ներքին գործոց նախարի օգնական Յօն-Վալ Կովկաս գացեր է. խաղովութիւններուն պատճառով կը վախցուի որ կովկասի մէջ խոշոր ապստամբութիւն մը ծագի:

Ելլալով մէջ նախարարակ նխորհուրդ տեղի ունեցեր է, որ զբաղուեր է ռուս կառավարութեան տալիք յայտարարութեամբ բը. խորհուրդէն յետոյ Ջինովիէֆին և ռուս կառավարութեան քանի մը բացատրութիւններ և խոստումներ ստուեր են:

—Ռուս նաւատորմիցը արդէն թուրքիոյ ջրերը կը գտնուի. բայց նաւատորմիցին զրկուելուն մեծ նշանակութիւն չեն տար և կը հարծուի որ միայն ռուս հասարակութեան գոհացում տալու համար զրկուած է:

ՌՈՒՍՍԵՆԻԱ

Ռումանական կառավարութիւնը պահանջեց զօրքերը զէնքի կը կանչէ: Ռումանիա եւրոպական պետութեանց յայտարարած է որ թէ Պուլիարիւ թուրքիոյ դէմ պատերազմ հրատարակէ, ինք

անտարբեր չի կրնար կենալ, որովհետև Մակեդոնիոյ մէջ ռուսներ ալ կան:

ԱՆԳՂԻԱ

Անգլիական Պոլսոյ դեսպանը Բ. Գ. ան հաղորդեց է որ Պալ-ֆուրի երեսփոխանական ժողովին մէջ արտասանած ճառը առանձին նշանակութիւն մը չունի: Անգլիա եւս պիտի պնդէ ռուս-աւստրիական Մակեդոնիոյ համար առաջարկած բարենորոգմանց ծրարագրին իրագործմանը վրայ:

Պ ԱՏՕՐԱԿ ԼՆ

Ուսանողական պատգամաւորի մը բնութագրութեան քուէներու հակելու պաշտօն ունեցող Ընտրողական ժողովոյ Մեծ. անգամբ ընդունած շրջալով իրենց անգամակցութիւն, ընտրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կ/ւրակէ, 17 օգոստ., առաւօտ. Կան 6/շա ժամը 8էն մինչեւ 11:

Սիրոյ ողբունի մնա՞ ազօթարար Կախազահ Ընտրողական ժողովոյ Մարտիրոս Բն. Մարտիրոսեան

9 Օգոստոս 1903
Վառնա

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒ ԿԻՍՏԱՆԻՆ

Լօզան, 2ուլիսիա
Երկ որդ արի
Բ. տարւելանի դասախօսութիւնները կազմին Սեպտ 1/14ին
Արեւելեան կամ հայկական կրթատունը կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, սուբետրական կամ արհեստագիտական ստող ու լուրջ կրթութիւն մը, ներգաշնակօրէն և սելաիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ: Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս դասանց ու է վճարուով, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւայլն: Ընտանեկան կեանք:
Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրաձայն զպրօցներէն և կրթատան տարեթոշակը. հակառակ ընծայուած բաղձաթիւրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով աման է:
Կրթատան յայտագիրն ամէն ուղղի կը զրկուի:

ՏՆՕՐԷՆ
Մ. Նաչպանեան
Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ
Հասցէ՝
Լօնտրի 1.
Լօզան. —Սիւիս

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варва